30.12.2019 թ. կնքված «ԲՄԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2019-01»

պայմանագրում փոփոխություն/լրացում կատարելու վերաբերյալ

համաձայնագիր № 2

ք. Երևան «04» ապրիլի 2020 թ.

ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս գլխավոր տնօրեն՝ Ա. Վանյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և **«Կոմպասս» ՍՊ ընկերությունը**, ի դեմս առևտրային տնօրեն Ս. Սուքիասյանի (այսուհետև՝ վաճառող), մյուս կողմից, հիմք ընդունելով № «ԲՄԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2019-01» պայմանագրի 8.6 կետը և 2017 թ-ի մայիսի 4-ի 526-Ն որոշման 56-րդ կետի 4-րդ ենթակետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1. Հաշվի առնելով Վաճառողի կողմից ստացված գրությունը, կողմերը որոշեցին 2019 թ. դեկտեմբերի 30-ին կնքված № «ԲՄԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2019-01» պայմանագրի շրջանակներում ապրանքի մատակարարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով:
2. Սույն համաձայնագիրը համարվում է № «ԲՄԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2019-01» գնման պայմանագրի անբաժանելի մաս:
3. Սույն համաձայնագրում չնշված կողմերի գնման պայմանագրով նախատեսված մյուս կետերը մնում են անփոփոխ:
4. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից. սույն համաձայնագիր № 1-ն է հայերեն լեզվով, երկու օրինակից, որը ունի հավասարազոր իրավաբանական ուժ:

Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ Հասցե՝ ք. Երևան, 0025, Մ. Հերացի 12 Կենտրոնական գանձապետարան՝ Հ/Հ 900018004649 ՀՎՀՀ 02625503 Գլխավոր տնօրեն՝ Ա. Վանյան _____ (ստորագրություն) Կ.Տ	«Կոմպասս» ՍՊԸ Հասցե՝ ք. Երևան, Չարենցի 66 Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ Հ/Հ 1570010074570100 ՀՎՀՀ՝ 01545204 Առևտրային տնօրեն՝ Ս. Սուքիասյան _____ (ստորագրություն) Կ.Տ